Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2018 **թվականի սեպտեմբերի** 13-**ի նիստի** N 3 **արձանագրությունից**
(հարցման կարգով)

ԼՍԵՑԻՆ.- «**Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի (խորհրդի) կազմի «Պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված խորհրդի անդամներ» բաժնում փոփոխություններ կատարելու մասին հարցը**:

Զեկուցող՝ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Կ.Լ.Աթոյան**:

Ելնելով համալսարանում կատարված կադրային փոփոխություններից և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի՝ «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին» N 975 - Ն որոշման հավելվածի 4-րդ կետը և 10-րդ կետի «դ)» ենթակետը՝ անհրաժեշտություն է առաջացել կատարելու փոփոխություններ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի (խորհրդի) կազմի «Պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված խորհրդի անդամներ» բաժնում: Համալսարանի կառավարման ֆակուլտետի խորհուրդը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի աշխատանքի տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Մարտիրոս Երվանդի Պետրոսյանի փոխարեն առաջադրել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Արմենի Հայրապետյանի թեկնածությունը: Նշվեց նաև, որ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի վարիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամ Հակոբի Սարգսյանը փոխադրվել է պրոֆեսորի պաշտոնի:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի՝ «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին» N 975 - Ն որոշման հավելվածի 4-րդ կետին և 10-րդ կետի «դ)» ենթակետին համապատասխան՝ «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2015 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմը հասատատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2010 թվականի նոյեմբերի 29-ի N 1033-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1248-Ա որոշման հավելվածի «Պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված խորհրդի անդամներ» բաժնում՝

   1) «Մ.Պետրոսյան - Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի աշխատանքի տնտեսագիտության ամբիոնի վարիչ» բառերը փոխարինել «**Ռ.Հայրապետյան - Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար**» բառերով:

   2) «Ա.Սարգսյան - Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի վարիչ» բառերը փոխարինել «**Ա.Սարգսյան - Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր**» բառերով:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2018 թ. Սեպտեմբերի 13
Երևան